ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԹՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԹՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամերիկայի հայոց վիճակի թեմական պատգամավորական ժողովը գումարվեցավ նոյեմբեր 15—16 օրերուն Նյու-Յորքի հայոց Սրբոց Նահատակաց եկեղեցիին մեջ, առաջնորդ գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի նախագահությամբ և 116 պատգամավորներու մասնակցությամբ: Միաձայն քվեներով թեմական առաջնորդ ընտրվեցավ Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան:

Ձեզ վեհափառությունեն խոնարհաբար կխնդրենք ընտրության վավերացումը:

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ատենապետ՝ ԲԱԲԳԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՔՍՈՒՏՅԱՆ
Ատենադպիր՝ ԱՐԱ ԱՎԱԳՅԱՆ

17 նոյեմբեր 1958
ՆՅՈՒ-ՅՈՐՔ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Դոհությամբ ստացանք պատգամավորական ժողովիդ պաշտոնագիրը թեմական առաջնորդի ընտրության մասին: Սիրով կհաստատենք Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի ընտրությունը իբրև առաջնորդ թեմիդ: Կշնորհավորենք նորընտիր առաջնորդը և պատգամավորական ժողովդ:

Կհաշորդե հատուկ կոնդակ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

12 դեկտեմբեր 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ